ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու

և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/9691/02/24 ք. Երևան
28 Նոյեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «Մուրադյան Շին 86» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Դատարանի 20.11.2024թվականի որոշմամբ վերադարձվել է «Մուրադյան Շին 86» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ՀՀ ներքին գործերի նախարարությանն իր կարիքների համար հայտարարված թիվ ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-43/2024/ՇԻՆ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ՝ «ՄՈՒՐԱԴՅԱՆ ՇԻՆ 86» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին:

Հայցվորը վերացրել է հայցադիմումի թերությունները և այն կրկին

ներկայացրել դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, ՀՀ ներքին գործերի նախարարությունից պետք է պահանջել թիվ ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-43/2024/ՇԻՆ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ՝ «ՄՈՒՐԱԴՅԱՆ ՇԻՆ 86» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«Մուրադյան Շին 86» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ՀՀ ներքին գործերի նախարարությանն իր կարիքների համար հայտարարված թիվ ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-43/2024/ՇԻՆ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ՝ «ՄՈՒՐԱԴՅԱՆ ՇԻՆ 86» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. ՀՀ ներքին գործերի նախարարությունից պահանջել դատարան ներկայացնել թիվ ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-43/2024/ՇԻՆ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ՝ «ՄՈՒՐԱԴՅԱՆ ՇԻՆ 86» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4.Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թվականի հունվարի 14-ին:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.11.28 12:06:04 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am